


ՀԱՅ

ՄՎԱՐՏ



ԿԻՍԱՄՍԵԱՅ ՕՐԿԱՆ Բ.Մ.Ը.Մ.
Hai Scout Organe des
SCOUTS ARMÉNIENS

ՀԱՍՏԵ - Խորասանձեան Խան, Թի 26, Սիրէճի և Գոլիս
ADRESSE - Khorassandjian Han 26, Sir-Kédji Constantinople

Հեռագրայն Ար. 2146 ԲԱԺԸԵԳԻՆ Telephone ճե. 21461

Բ. ՏԱՐԻ ԹԻ 15

Պոլիս և Գոլիս Երկ, շրջ. 120
Արասանձեան . . . Ժր. 15
Ամերիկա . . . Ժր. 150

1 ՄԱՐՏ 1922

ՈՒՐ ԵՆ ԲԱՐԵԿԱՍՆԵՐՍ

(Մրցում են Վերջին էջ)



Պատրաստեց՝ Ներսիսի V (լուսատիպի վարժարան)

Préparé par V e trope de Péra Chlelli

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻ ԱՌԹԻՒ

Գարուն է. սկառուներու նախասիրած եղանակներէն մին. արդէն իսկ քաղաքամէջի նեղ կեանքը թօթափելով բացօդեայ վարժութեանց ծրագիրները կը պատրաստուին: Բնութեան հետ համընթաց սկառուութեան ալ զարթնումը կը կատարուի վարդազոյն ապագայի մը յոյսերով:

Առօրեայ արշաւներ կ'սկսին կազմակերպուիլ քաղաքին մօտակայ տեղերը. ստէպ ոչ այնքան բազմալի սակայն սկառուներուն համար կարեւորութենէ՞ զուրկ, անակնկալ օդի փոփոխութեանց միջադէպերով համեմուած:

Անցեալին բազդատմամբ բան մը աւելի կը զգան սկառուները իրենց մէջ, կուրծքի նորադիր երկզնիրուն տակ՝ աւելի ազնիւ և աւելի սկառուական օդով լի սրտեր սկսած են բարասել: Քայլ մը եւս առնուած է դէպի խէտլ:

Եւ ինչ որ եղած է ձմեռուան դժուարին և սեղմ պայմաններու ներքեւ, անշուշտ լաւագոյնը կարելի պիտի ըլլայ քնել ամառուան ընթացքին՝ երբ խմբակեան սիրտօրէն յարարութեան մէջ է իր սկառուներուն հետ, երկարատեւ արշաւներու առթիւ:

Այս դէպի մեր միակնպատակակէտը ձգտող և անոր իրագործման մեծապէս սատարող շարժումը կը պարտինք վարիչներու փորձառութեան որոնք լաւ կերպով ըմբռնած են թէ՛ կարգն ու աստիճանը սկառուութեան մէջ լոկ միջոցներ են, թէ՛ անոնք ուրիշ բանի չեն ծառայեր բայց եթէ տղոց մէջ գործունէութիւնն ու եռանդը վառ պահելու, և թէ՛ ապագային աւելի լայն արդիւնքներ ձեռք ձգելու համար՝ անհրաժեշտ է ընտրել հետաքրքրութիւնը արթնցնող, ազդու և զբօսեցուցիչ միջոցներ, այնպէս որ սկառուութիւնը ըլլայ գեղեցիկ՝ իր մանրամասնութեանց և վսեմ իր ամբողջութեանը մէջ:


Եւ իրօք որքան հեշտ է երեւակայել, արշաւէ մը վերադարձին, վերջալստի ճառագայթներուն ներքեւ, յոգնարեկ՝ բայց աւելի աղնուացած հոգիով սկառուներ՝ որոնց հորիզոնին վրայ յօրինուող ստուերները իրենց սպառնալի խորհրդաւորութեամբ կարծես ըսիկ կ'ուզեն թէ խոնջէնքին մէջ իսկ կարելի է հաճուր գտնել ...

ԲԵՐԱՇԵՆԼԻ V ԽՈՒՍԲ
* Լուսաւորիչ՝ վարժարան

ՍԿԱՌՈՒՏՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿՐՆԱՆ ՄԱՔԱՌԻԼ

ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԷՄ

Կը զարմանամ որ՝ տիրող հիւանդութիւններէն, սկառուները հասարակ ժողովուրդէն նուազ կը վարակուին, արդէն այս մասին խօսած եմ ձեզի, և եթէ իմ ըսածներս յիշէք հաւանական է որ չի հիւանդանաք: Այդ իսկ



պատճառաւ է որ սկառուները կրցան հանրութեան մեծամեծ ծառայութիւններ մատուցանել Հնդկաստանի վերջին Influenza-ի պարագային: Անոնք չի հիւանդացան որովհետեւ շնչեցին իրենց քի-

թէն և ըրին այն ամէնը զոր ես ասկէց տուջ ձեզի պատուիրած էի, և այսպէսով անոնք կրցան ազատօրէն հիւանդապահի, առողջապահական շրջուն պաշտօնեայի և առողջապահական քարոզիչի գերերը կատարել, մասնաւորաբար անոնք շատ գեղեցիկ գործ մը կատարած են, ճիշտ իմ այս երկիրէն՝ հարաւային Հնդկաստանէն մեկնելէս տարի մը յետոյ: Գօլէճի մը մէջ հիւանդութիւնը ծանր համեմատութիւններ առնել սկսած է և նոյն միջոցին է որ սկառուները հոն հիւանդապահի վտանգաւոր և միշտ վարակուելու ենթակայ դերը ստանձնած են, իրենց պաշտօնը խճճօրէն կատարելով, այսպէսով թէպէտ 17 հոգի մեռան սակայն հզած գերմարդկային ճիգերուն շնորհիւ կարելի եղաւ աշակերտութեան ստուար մասը ազատել: Այս բոլորը կ'ապացուցանեն Հնդկաստանի մեր եղբայր սկառուներուն արիասրտութիւնը: Եւ ես վստահ եմ որ անոնք բերաննին միշտ գոց պահած և քիթերնէն շնջած են: Արդէն՝ սկառուներու Քարեկամական Ընկերութիւնը կը հաստատէ թէ սկառուները նուազ կը հիւանդանան որովհետեւ անոնք ինքզինքնին բարոյապէս թէ ֆիզիքապէս մաքուր կը պահեն, և թէ անոնք չեն ծխեր, այսպէսով մենք պիտի ունենանք սպիտակ մօրուքով սկառուներ որոնք զուարթ և առողջ պիտի ցատկաւան վերի պատկերին նման:

Թարգմ. Արմենակ
Սկառուս պէս
ՊԵՏԵՆ ԲԱՌԵՂ

Ա Ն . . .

(ՊԱՏՄՈՒԱԾՔ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ)

Արամ, 1½ տարեկան, նիհարակազմ, նուրբ զիմադիմերով ամբողջն զէմքով պատանի մըն էր:

Փոքր տարիքէն իր ծնողքը կորսնցուցած ըլլալով բարեւէր զրացիներ զինքը քաղաքին որբանոցը զրած էին շոն, թէև տակաւ առ տակաւ սկսած էր մտնալ իր փոքր սրտին մեծ վիշտերը՝ սահայն չէր զադրած մեղամարդոտ և երազուն տղեկ մ'ըլլալէ:

Իր մտային հազուադէպ կարողութիւններովը յաջողած էր իր շուրջ համակրական շրջանակ մը ստեղծել բայց զժրատաբար ան ալ երկար չէր տեւած իր ի յայտ բերած անտարբերութեամբը, ան միշտ կը խուսափէր ընկերներու ներկայութենէն, որոնք զինքը «մենակեաց» կը կոչէին: Այ մէկ բանէ հաճոյք կը զգար ոչ իր տարեկիցները հրապուրող խաղերէ, ոչ պատյաներէ և ոչ ալ ստացած վարձատրութիւններէն, միայն առանձնութենէ կ'ախորժէր, կը սիրէր բնութիւնը և յաճախ քաջուած որբանոցին պարտէզին մէկ անկիւնը՝ հեռու ժխորէ և դժուած վիճաբանութիւններէ գլուխը ծառի մը բունին կռթնցուցած և նուազկատ աչքերը հորիզոնին յառած... անվերջ կը զիտէր, կարծես ստոր մէջ միայն դռներով սփոփանքը:

Կիրակի առաւօտները ան՝ յամբ քայլերով գլուխը առաջ կտար և եկեղեցի կ'երթար, հոն ծունր դրած արտասուածքովը աչքերով ջերմեռանդօրէն ազօթելու համար իսկ երբ կէս օրէ վերջ իր ընկերները կը զուարճանային պարտէզին մէջ, հազարամէկ պտուղներով աղմկելով շրջակաները, ան դարձեալ մեկուսացած իր սիրական անկիւնը ձամեր ամբողջ կ'երազէր:

Կ'ատէր իր տարիքի տղոց յատուկ ճգնիմ հաշիներն ու շահամուտութիւնը և թէպէտ ամենաթոյզն համակրանք մը իսկ չէր տածեր իր ընկերներուն հանդէպ՝ սակայն միշտ առիթը չէր վախճներ անոնց օգտակար ըլլալու: Փոքրիկ գաղափարապաշտ մըն էր ան քիչ մը շափազանցութեամբ: Իրեն համար իրեր զոյսութիւն չ'ունէին և մարդիկ ալ ուրիշ բան չէին բայց կ'իթ բանական մեքենաներ:

Շատեր իրեն համար զիրօնաւոր մը պիտի ըլլայ՝ կ'ըսէին իսկ ուրիշներ ալ «մարդատեաց»:

Տարի մը առաջ որբանոցին տնօրէնութիւնը մասնաւոր յայտարարութեամբ մը կ'ընդունէր սկսուածութիւնը որբանոցին մէջ և այդ օրուրնէ սկսած արդէն կազմուած խումբը շնորհիւ կարող խմբապետի մը անխնայ ջանքերուն՝ տիպար մակարդակի մը հասած էր:

Արամ, նախ իր օրովրական անտարբերութեամբը զիտած էր այս շարժումը սակայն հետզհետէ տեղեկանալով անոր նպատակին, ձգտումներուն, դաւանանքին, սկսած էր հակում մը ցոյց տալ առ այդ:

Եւ օր մ'ալ ի մեծ ապշուածիւն և թերահաւատութիւն ամէնուն, Արամ սկսուածական շարքերուն մէջ կը մտնէր: Ան սկսուածութեան մէջ տեսած էր իր իտէալին մասնակի իրագործումը, այո՛, ան սկսուած մը պիտի ըլլար և իրական սկսուած մը:

Վերջտագէս հասաւ իր կողմէ այնքան բաղձացուած ժամը: Պիտի երգնուր... Անոր հոգին խոնարհեցաւ գաղափարին վստմութեանը առաջ, իր կեանքին մէջ յեղաշրջում մը տեղի պիտի ունենար, պէտք էր իր բովանդակ կամքը, ուժը ի սպաս դնել այդ բարձր ձգտումին:

Ան դարձեալ առանձնացաւ իր սիրական անկիւնը և հոն գլուխը ափերուն մէջ ինքնամփոփում մը ունեցաւ: Ո՛չ, ան ուրիշներու պէս կուրօրէն պիտի չ'երթար, նախ պիտի հաշտեցնէր իր հոգին սկսուածական սղոյն հետ և ապա պիտի մտնէր նուիրական սեղանին: Եւ այդպէս ալ ըրաւ:

Եօթ օր վերջ նորընծայի երկը կը ստանար:

Գարնալերջի գեղեցիկ զիշերներէն մէկն էր, աստեղազարդ զիշեր մը, քաղցր և հոգեպարար լուծիւն մը կը տիրէր: Արամ բանակումին ծայրը գլուխը վրանէն դուրս յուրօրէն ընկողմանած զիշերային զով սիւքին և եթերային բոյրերուն իրեն առթած վայելքէն արբշու, կը խոհար:

Փոխուած էր ան, թէպէտ ոչ մէկէն կը սիրուէր բայց սկսած էր իր նմանները սիրել: Բռնադրօսիկ սիրով մը և որ սակայն օրէ օր կ'արմատանար իր մէջ: Կը պաշտէր սկսուածութիւնը:

Ան շատ ազդուած էր նոյն գիշերուան բանակումի խարոյկին շուրջ խմբապետին պատմած հերոսներու գիւցադներու պատմութիւններէն կը վափաքէր անոնց յիշատակը միշտ վառ պահել մըտքին մէջ, որքան քաղցր էին անոնք... Մերթ ընդ մերթ սթափելով, նախանձոտ ակնարկ մը կը նետեր դուրսի սկսուած պահակին՝ որուն ստուերը կ'ուրուադծուէր իր շուրջը: Իր տկար կազմը պատճառարանելով չէին ուզած զինքը պահակ կարգել, ուզած էր բողոքել սակայն... սկսուած հնազանդ է: Եւ ան կը զգար իր արժանապատուութեան ջախջախումը, այս պատճառով ընկճուած էր անոր հոգին:

Յանկարծ գայլի ունումը խզեց այդ հաւաք լուծիւնը: Արամ սարսուռ մը զգաց: Պահակ սկսուած սկսաւ շուտափոյթ քայլերով երթեկեկել: Հագիւ քառօրդ ժամ անցած էր երբ խշրաւք մը լսուեցաւ և քիչ վերջ վախորային վայրուն աչքերով գայլ մը թեթեւ ոտուամով մը դուրս ցատկեց խալ թուփերէն և ուրուականի մը նման ցցուեցաւ սարսափահար պահակին առջեւ:

— Իայլը, պոռաց Արամ և ձայնը խեղդուեցաւ կոկորդին մէջ: Զիրար խաչածեղով մտածումներ կը շարժարէին իր ուղեղը, վայրկեանը վճռական էր Անթարտի մը մէջ գաւազանը առնելով խոյացաւ գայլին վրայ և ուժգին հարուած մը տալով գլխուն զայն ընդարմացուց, բայց վտանգը անխուսափելի էր նոյն միջոցին մտակայ վրաններու սկսուածները ազմուկէն ահաբեկած դուրս խուժեցին: Քիչ վերջ գայլը ինքնինքը վերագտնելով կոնակին վրայ կ'ընցաւ և նետի մը արագութեամբ սլացաւ: Արամ վրայ թէչէտ Արամ կ'ըցած էր փրկել իր ընկերոջ կեանքը սակայն իր նիհար բազուկները անօր էին գայլին ահաբեկ հանկերուն առջեւ:

Հրազնի պայթում մը լսուեցաւ և արիւնատենդ գազանին մարմինը անկենդան փռուեցաւ գետին: Խմբապետն էր Արամը նուազած վիճակի մէջ կար-

միր խաչի վրանը փոխադրեցին նախնական դարման-
ները տալու համար: Ամէնքը զարմացան իրեն անձ-
նութիւնների վրայ և խոր յարգանք մը համակից
բոլոր սկառտները այս համեստ՝ սակայն քաջ ընկե-
րոջ հանդէպ: Մի քանի օր վերջ բաւական մը ապա-
քինած էր, ընկերները ամէն միջոց ձեռք առած
էին զինք խնամելու համար:

Արամ խումբին ամէնէն սիրուած սկառտը
եղաւ:

ԵՐՈՒԱՆԳ Մ. ԻԹԹԻՃԵԱՆ



ՉԵՌԱԿԱՆ ԶԱՐՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Ճարտարութիւնը մտքի արտադրութիւն
մ'է որ ձեռքերուն միջոցաւ կ'արտայայտուի:
Ան կարծուածին չափ բնական յատ-



կութիւն մը չէ.
ինչպէս ոյժը, սա
վարժութեամբ կը
մշակուի:

Տղաք պէտք է
որ իրենց փոքրիկ
տարիքէն խօսի վար-
ժութիւն գոնէ պարզ

գործիքներ գործածելու: Մուրճը, տաշոցը
կամ սղոցը առարկաներ են, որոնցմով աշ-
խատելու համար մասնաւոր խնամքի պէտք
կայ: Տախտակ մը կտրել, կամ գամ մը գա-
մելը շատ պարզ կ'երեւի, և սակայն այդ
պարզ գործերն ալ իրենց կանոնները ունին,
այդ կանոններուն անգիտութիւնը, բոլոր աշ-
խատանքը սպարդիւն կը դարձնէ: Այս կարգի
գրազու մեթոդով հետաքրքրուելը, հաճելի և
հրահանգիչ ըլլալէ զատ կրնայ տնտեսական
չաճ մ'ալ ապահովել, Տան մէջ, ասիթը փախ-
ցնելու չէ այս տեսակ փորձեր կատարելու:

Գործաւորի մը, յատկուցուելիք վճարումը
կրնանք մենք չահիլ եթէ գիտնանք՝ սեղանի
մը ծուած ոտքը շտկել, վարագոյր մը կախել,
պատը նորոգել, ելեքտրական լոյսի կտուց մը,

զանգակ մը հաստատել կամ շտկելու պէս
գործեր որոնք մեր կարողութեան սահ-
մանին մէջ են:

Հնարամտութեան և ձեռքի ճարտարու-
թեան այս նախնական կրթութիւնը սկառու-
ներու համար անհրաժեշտ է, եթէ չեն ուզեր
որ ամենափոքր արգելքի մը առջեւ ինքզինք-
նին չփոթած կամ ճարտահատ գտնեն:

Երեւակայել՝ հեծելանիւորդ մը կամ
սկառտ մը որ ճամբան պատահած իր հեծե-
լանիւն փոքր խանգարումները նորոգելու
անկարող է, չունենալով պայուսակ մը կամ
տուփ մը որուն մէջ գտնուին գործիքներ և չը
գիտնալով զանոնք գործածել:

Ճամբորդող սկառտը գործիքներով
լեցուած ծանր պայուսակ մը չը կրնար կրել,
գործիքներէ աւելի անհրաժեշտ իր գոյ-
քերը ունի կրելիք, անոնց տեղ սկառտական
հաստատուն զմելի մը և բաւականաչափ ա-
ռատուն արդէն իր պէտքը կրնան լրացնել, եթէ
նախապէս ատոնք գործածելու ամենապարզ և
դիւրին միջոցները ուսումնասիրած և փորձեր
կատարած է, մանաւանդ առատանի կամ չուանի
գործածութեան: Պէտք է գիտնալ զանազան
կապերը և պարագայի պահանջին համեմատ
ատոնք օգտագործելը: Սկառտները պէտք է
շատ վաթճ ըլլան կապերու գործածութեան:
Եթէ բաւական ժամանակ չը փորձեն, իրենց
ունեցած վարժութիւնն ալ կը կորսուի: Ճամ-
բան քալած ատեննիդ՝ առանց խորհելու շա-
րունակ փորձեցէք, աչքերնիդ գոց, յետոյ ձեռ-
քերը կունակը յաճախ իրարու հետ մըցելով:

Սկառտները նախնական նիւթերը հայ-
թայթելով կրնան նախ փոքր ձեռնարկներէ
սկսիլ, ինչպէս՝ թուրքիկ կամ խաւաքարտէ
տուփերու շինութեան, սեկուրաժի կամ ատաղ-
ձագործութեան, ատոնք կրնան խումբին հա-
սոյթի սղբիւր մ'ալ ստեղծել, այս կարգի
աշխատութիւններ տղոց համար շատ հրապու-
րիչ և հաճելի են: Երբ միտքը և ձեռքը կը գոր-
ծեն, կարգապահական ոգին ալ կ'ամրանայ,
երբ բոլորը միասին կ'աշխատին:

Որքան հաճելի է սա տեսարանը, ահա
սկառտ մը որ երանդով տուփի մը շինութիւնը
առաջ կը տանի, թերեւս իրեն ապագոյ
խնայողութիւնը անոր մէջ պահելու համար...:

ՊԻՄԵՆ ՊԵՕՐԷՔԵԱՆ



ՈՒՂՏԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ինծի համար հաճոյք մը պիտի ըլլար ձեզ պատմել կատարեալ սկաուտի մը պատմութիւնը որ տեղի ունեցած է Արարիոյ անապատին մէջ, բայց պէտք չ'է հասկնալ մեզի պէս համազգետով սկաուտ՝ այլ սկաուտ բառին զոյւթիւնն իսկ անգիտանալով հանդերձ իրական սկաուտի մը կեանքը վարող մէկը:

Այսպիսիներէն մէկն էր պատմութեանս հերոս Արարը, որ առանձայած Արարիոյ ընդարձակ անապատներէն մէկուն մէջ, սկաուտի մը կեանքը կը վարէր իրր միակ հաճոյք ունենալով հետախուզութիւնը, այսպէսով ան հետեւցնելու այնպիսի կարողութիւն մը ձեռք բերած էր որ առանց դժուարութեան հետքերու վրայէն պատմութիւններ կը կարդար: Եւ որ մը երբ սովորականին նման պատմութիւն մը հետեւցուցած զո՞հ սրտով իր խրճիթը կը վերադառնար՝ ճամբան երկու Արարներու հանդիպեցաւ որոնք իր քիչ առաջ կարդացած պատմութեան հերոսներն ըլլալ կը թուէին. ասոնցմէ մին մեր Արարին մօտեցալով հարցուց թէ մոլորած ուզտ մը տեսած էր:

— Զախ աչքը կոյր, և ակուններն ալ թափած էին աւելցուց Արարը:

— Այո՛, Այո՛, կրկնեցին միմեաները ուրախութեամբ:

— Եւ եթէ չեմ սխալիր շարունակեց մեր հետախուզը, ձեր ուղտին մէկ ոտքը կաղ ու վրան ալ մեզր ու ցորեն բուսցած էր:

— Իսկապէս, գոչեցին արարները միարեւրան, քանի որ բոլոր ասոնք տեսած էք, անշուշտ աղամանդներն ալ տեսած ըլլալու էք և արդեօք կը հաճի՞ք մեզի ցոյց տալ իր բռնած ուղղութիւնը:


— Բայց ես ոչ ձեր ուղտը և ոչ ալ ձեր աղամանդները տեսած եմ՝ աւելցուց մեր արարը և կը պատրաստուէր հեռանալ երբ ուղտին տէրերը կարծելով թէ գործերնին խաբերայ աւագակի մը հետ է, զինք բռնութեամբ մօտակայ գիւղի մը դատարանը առաջնորդեցին: Հոն հետախուզը բնիկը դատարանին առջեւ յայտարարեց թէ ինք ուղտը չ'էր տեսած սակայն իր պատմութիւնը հետեցոցած էր քիչ առաջ դիտած հետքերէն:

— Ուրեմն, ըսաւ դատարարը քանի որ կ'ըսես թէ ուղտը չես տեսած, բացատրէ մեզի թէ ինչպէս կրցար այդ մանրամասնութիւնները գուշակել:

— «Շատ պարզ է պատասխանեց արարը պաղարիւնութեամբ, ուղտին կաղ ըլլալը գուշակեցի աջ ոտքին հետքերուն զօրաւոր և

բուռած ըլլալէն, ասոնց հետեւելով հասայ սկաուտի մը ուր հետքին աջ կողմը գտնուող խոտերը միայն կերուած և տեղ տեղ ալ տերեւներ թափած էին, ասոնցմէ յայտնի կը տեսնուէր թէ ակուններէն ոմանք թափած և ձախ աչքն ալ կոյր էր իսկ դալով մեզրին ու ցորենին, ճամբուն մէկ կողմը մեղուններ իսկ միւս կողմը մրջիւններ հաւաքուած էին»: Այս խօսքերը բաւական եղան ամէնքը խոր ապշութեան մասնելու, և բնիկը հանդարտութեամբ դաւազանը առնելով իր հիւղակին ճամբան բռնեց:

ՔԻՆԳԻԹԵԱՆ



ԻՆՉ Է ՏՕՏԵՄ (TOTEM)

Sostմ բառը Զրիփեւայ հնդկներու լեզուէն է և կը նշանակէ ցեղ: Տօտեմական դրութիւնը կողմակերպչական ձեւ մըն է: Հնդկներուն ժօա՛ բոլոր ցեղերը մէյմէկ ասուած ունին ինչպէս, այժ մը այնլուծ և կամ ուրիշ կենդանի մը, յոս նմանութիւն մը կայ սկաուտութեան հետ, ուր ցեղին տեղ կը ներկայացուի խմբակը, և կենդանին զոր իրենց նիզակաղբօշին վրայ կը կրեն, իրբեւ իրենց խորհրդանշան ընդունած են: Սկաուտութեան մէջ ալ, խմբակը իր մասնաւոր sosեմը ունենալով հանդերձ կ'արտօնէ որ իր սկաուտներէն իւրաքանչիւրն ալ իր անձնական sosեմը ունենայ: Անձնական sosեմը խմբակին մեծամասնութեան կարծիքին համաձայն կ'որոշուի, անշուշտ փափկանկատ ըլլալով և անհատին նկարագրին մասին երկար ուսումնասիրութենէ մը վերջ, օրինակի համար՝ սկաուտներէն մէկը շատ առագ կը վազէ բայց յամառ է. իր յատկութեան խորհրդանշան է «նապաստակը» և որովհետեւ իր թերութեան համար ալ երկրորդ sosեմ մը գնելը տգեղ է, զինքը պիտի անուանենք «յամառ նապաստակ»: Այս դրութիւնը իր որոշ օգտակարութիւնը ունի. «յամար նապաստակը»

պիտի ջանայ իր թերութիւնը սրբազրել որպէսզի մ'իայն «նապաստակ» կոչուի:

Soskil կարելի է անուանել նաև այն գերանը որուն դադաթը տաշելով խմբակի անտունին գլուխը շինուած է, իսկ անկէջ վար խմբակին ունեցած գործունէութենէն բացառիկ մասերը կը պատկերացունին խորհրդանշաններու փորագրութեամբ, և այսպէսով տարիներ ետք այդ ամբողջութիւնը գեղեցիկ կերպով մեզ կը յիշեցնէ խմբակին պատմութիւնը: Եւ ան՝ յաճախ բանակու մներու միջոցին հաստատուած՝ խմբակի վրանին ճակատը՝ կը հետեւի իր սկաուաներուն եւ անդուն գործունէութեան: Հիմակուան զարգացած ազգերու դրօշին վրայ գտնուող արձիւր, մեր զինանշանին խոլը, հնդկաստանի կովը և ուրիշներու խորհրդանշաններ, տօսեմակոսն դրութենէն նմոյշներ են:

Soskil թէև հին է, և սակայն մենք կը գործածենք զայն:

ՊԵՄԵՆ ՊԷՕՐԷՔՃԵԱՆ

ՑԼԱՊԱՐԸ

Սարոյի վառուած է, եղբայրներ հաւաքուեցէք շուրջը և պիտի խօսակցինք: Այսօր Մանտուերու ցեղին ցլապարին մասին պիտի խօսիմ:

Ցուլը հնդիկներուն միս և հագուստ կը հայթայթէ սակայն երբեմն անտառի այս խոշոր աշատունը ամիսներով կ'անհետանայ: Ատոր



համար հնդիկները այս մեր վերը յիշած ցլապարը կը պարեն խնդրելով «մեծ ուրիշ» էն որ դարձեալ իրենց զրկէ զայն: Ցեղապետին հրամանով պատերազմիկները և քաջերը կը հաւաքուին և մինչեւ ցուլերուն վերադարձը կը պարեն: Այս պարը յաճախ երեք շաբաթ կը տևէ յոգնողներուն տեղ միշտ նորիք գալով:

Շատ տարօրինակ պար մըն է այս: Պարին մասնակցողները վարազի մորթէ ցուլի գլխու գիմակ մը և անոր ծայրէն ալ ցուլին պոչը ներկայացնող կտոր մը կը կրեն: Նախ պարը

կը սկսի կլոր՝ շրջանակաձև դառնալով, պարողներն իրենց նետերն ու նիզակները նետել կը ձեւացնեն: Երբ պարողներէն մին կ'արտայայտէ իր յոգնութիւնը, ծուլով երևի վրայ գետին: Անմիջապէս պարողներէն մին աղեղ մը կը ձգէ անոր վրայ և բուխ նետ մը կ'արձակէ: Յոգնած անձը մեռած ցուլի մը պէս գետին կ'իջնայ: Այն ատեն իր քովը գտնուողները իրենց դանակները ճօճելով զինքը շրջանակէն դուրս կը քաշկուտեն, մինչ նոյն միջոցին՝ ուրիշ մը իր տեղը կը բռնէ շրջանակին մէջ:

Այս պարը շատ օգտակար կրնայ ըլլալ սկաուաներուն համար որովհետև ան թէ մկանները կը զօրացնէ և թէ հաւաքոյթի մը և կամ ներկայացման մը պահուն կրնայ սիրուն յաւելուած մը ըլլալ: Միակ դժուարութիւնը ցուլի գլուխէ դիմակն է, բայց սկաուաները այն ալ կրնան շինել հին պայուսակի մը ծայրերը կապելով և խաւաքարով կամ թելով գլխու մը երեւոյթը տալով անոր իսկ եղջիւրները փայտէ ալ կարելի է շինել, գունաւոր լաթերով՝ կրնան ոտքին մորթերը ձեւացնել, մնացեալ մասն ալ կը թողունք սկաուաներու երեւակայութեան:

Թարգմ. ՆՈՒՊԱՐ



Այսպարհիս ամենազարտիկ թռչունը colibrisն է իսկ ամենամեծը չայլամը:

Ասիոյ մէջ հող և ոջիլ ուտող ազգեր կան:

Ոսկին այնպիսի բարակ թերթերու կը վերածեն որ անոնցմէ 10000 հատը միասին սանթիմետր մը կ'ընէ:

Երկնքի ամենափայլուն աստղը սիրիուսն (Շնիկ)է որուն լոյսը միզի կը հասնի 10 տարիէն (լուսոյ արագութիւնը երկվայրկեանի մէջ 300000 քիլոմետր ըլլալով):

Հնդկաստանի մէջ Բայա անուն թռչուն մը կայ որ փոսուտաները կաւէ գնդիկներու փակցնելով իր բոյնը կը զարգարէ:

Ես քիմացիք ձեռները ձիւնէ տուներու մէջ կը բնակին:



Բերա-Շիշի մասնանիւղի V խումբը (ԼՍԱՍԱՆՈՐԻՆՆՎԱՐԺԱՐԱՆ)

ԱՐԴԻՒՆՔ “ԳԱՆՁԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԵԱՆ” ՄՐՑՈՒՄԻՆ

(Տես «Հայ Սկաուտ» թիւ 12)

Ստացած ենք 20 պատասխաններ: Բերա-Շիշի I խումբէն, 12, III խումբէն 2, V խումբէն 1, Գուլիլիէն 2, Սամարիան 1, Պեշիկբաշէն 1, Պեոյիւսթեքէն 1:

Բաղդասուրիւնները կատարուեցան կէսի ցուցակով մը, այդ ցուցակով առաւելագոյն 31 կէս սանմանուած էր:

Ոչ ոք կրցած էր հասնիլ այդ բիւին, սակայն ինչպէս ստրել կը տեսնուի, շատեր կրցած էին մօտեւայ անո՛ր. որոնք ստացան զանազան մրցանակներ.

28 կէս շահած է	Կասու խմբակ	Բերա-Շիշի	I խումբէն	կ'ստանայ	Կացին մը
28 » » »	Օշին Գիւլիւմեան	» »	»	»	Հիւսուածքի չուան
27 » » »	Ծիծեռնակ խմբակ	Սամարիան	»	»	Կողմնացոյց մը
27 » » »	Հրանդ Մինասեան	Պեոյիւսթեքէն	»	»	Մարզանքի Ֆլանել մը
27 » » »	Վահէ Գալաֆեան	Բերա-Շիշի	I խումբէն	»	Հնդկական կօշիկ մը
24 » » »	Արսաշու Պերպերեան	» »	»	»	Բոժոժաւոր ժապաւէն
23 » » »	Մերոպ Ասատուեան	Գուլիլիէն	»	»	Կողմնացոյց մը
22 » » »	Գաբրիէլ Նազաւեան	Բերա-Շիշի	I խումբէն	»	Կերակուրի աման մը
21 » » »	Ջաւէն Ենիքեյեան	Գուլիլիէն	»	»	Կերակուրի աման մը
21 » » »	Շմաւոն Գալուսեան	Բերա-Շիշի	I խումբէն	»	Կերակուրի աման մը

Աստուծոյ զատ մնացած մասնակցողներուն առանց զանազանութեան՝ տրուեցաւ մէկ մէկ յիշատակ, Baden Powell ի վերջին լուսանկարները իբր վարձատրութիւն իրենց ջանքին:

ԲԵՐԱ-ՇԻՇԻ I ԽՈՒՄԲ



Մեզի ամենէն մօտ դանուող աստղին լոյսը մեզի կը հասնի 4 տարիէն:

Աշխարհիս ամենէն երկայնակեաց անասունը կէտ ձուկն է որ կ'ապրի 300 տարի իսկ ամենէն քիչ ապրողը Paléngenia Songicauda ն (միջատ մը) է որ կ'ապրի 2—3 մամ միայն:

Կուզե՞րք ճարտարագէտ անասուններ են որոնք իրենց հիւղակները գետերու վրայ կը շինեն:

Հնդկաստանի մէջ ծառի վրայ ելլող ձուկեր կան...

Աշխարհիս ամենակարճահասակ ազգը Լարօնները իսկ ամենէն երկայնահասակները Բաթակոններն են:


Թաթար օրիորդները անուշահոտութեան տեղ տխրուք և սխտոր կը քսուին:

Բոլոնիոյ մէջ ազէ տուներով և կարասիներով գետնափոր քաղաք մը կայ:

Ափրիկէի վայրենիները զիրար բարեւելու համար կուրծքերնին ցեխ կամ հող կը քսեն:

Եւրոպայի մէջ խոտ մը կայ որ կողմնացոյցի գեր կը կատարէ՝ իր սուր կողմերը հիւսիս զարձնելով:

Ամերիկայի մէջ ճանճուող բոյսեր կան:



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԽԱՂԵՐ

ՄՏԻԿ ԸՆԵԼ ՍՈՐՎԻԼ

I. Կապեցէք սկաուտի մը աչքերը ե՛ւ իրեն երեք տարբեր ձայներ իմացուցէք օր. մուրճի մը առարկայի մը կամ բանալիի մը՝ ապակիի բաղխումը և լն. և իրեն հարցուցէք լսած ձայներուն տեսակները, եթէ կարինայ ճշգրտօրէն բացատրել իրարու զարնուած առարկաներուն տեսակները, այն ատեն արձանագրեցէք այդ սկաուտը և թող ուրիշ մը իրեն հետեւի: Միեւնոյն ժամանակ ի նկատի առէք առարկա-

ներուն սեղգութիւննը և հեռաւորութիւննը:

II. Սկաուտները սեպանի մը շուրջ կը բուրիսն, խմբապետը անոնցմէ մէկուն մօտենալով ցած ձայնով նախադասութիւն մը կ'արտասանէ, այս վերջինն ալ պարտաւոր է նոյն նախադասութիւնը իր քօլի ընկերոջ կրկնել և այսպէս յաջորդաբար: Իւրաքանչիւր խմբակ զատ շրջանակ մը կը կազմէ և որ խմբակը որ կարենայ ճշտութեամբ նախադասութիւններու փոխանցումը կատարել, այն խմբակը կը շահի: Նախադասութիւնը պէտք է հետզհետէ երկարել և կնճռոտել:

III. Սկաուտի մը աչքերը գոցեցէք, և թող ամբողջ մը վրայ անշարժ կենայ: Միւս սկաուտները պէտք է ջանան առանց դգացնելու անոր մօտենալ, և ով որ ամէնէն աւելի մօտենայ կը շահի:

IV բոլոր սկաուտներուն աչքերը կը կապեն իսկ խմբապետը անկիւն մը քաշուելով թեթեւօրէն կը սուլէ: Սկաուտները կը ջանան անոր հպիլ և ով որ կարենայ առաջին անգամ անոր դպչիլ, ան է շահողը: Սակայն խաղը կը շարունակուի մինչեւ որ ամէնքն ալ անոր դպչելով ազատին և մէջտեղը մնայ սկաուտ մը որ «անճարակ» կը կոչուի և որ պարտի գրաւ (gage) մը տալ:

ՀՈՏԱՌՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ


I. Թղթէ փոքր սյարկերու մէջ զանազան հոտաւէտ առարկաներ դնել և սկաուտներուն կարգաւ հոտոտել տալէ վերջ այդ հոտերուն ցուցակը պահանջել: Ով որ առաւելագոյնը կրցած է գուշակել, ո՞ր շահի:

II Զօրաւոր հոտով զանազան առարկաներ գետեղել սրահին մէջ և ըսել սկաուտներու որ զանոնք փնտռեն, ամենէն շատ առարկայ գտնողը կը շահի:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ՓՈՐՁԵՐ

I Սկաուտի մը յանձնել ճոխ թղթածրար մը որպէսզի իր վրայ պահէ ուրիշ խմբակի մը երկու սկաուտները պարտին զայն խուղարկել 10 վայրկ. պայմանաժամով, եթէ յաջողի գտնել կը շահի եթէ ոչ կը կորսնցնեն: Այս խաղը կարելի է առանց խուղարկելու կատարել սկաուտին հարցնելով թէ ո՞ւր պիտի պահէր թղթածրարը:

Թարգմ. ԳՈՒՐԳԵՆ



ԻՆՉՈՒ ԶԻ ԿԱԶՄԵԼ

1. Խումբին համար և բոլոր սկառտներուն օժանդակութեամբ համակազմութի հաւաքածոյ մը որ նաև ազգակ մը պիտի ըլլար թղթակցութիւններ կատարելու արտասահմանի սկառտներուն հետ:

2. Խումբին լուսանկարներուն և փաթեթաբալներու հաւաքածոյ մը որ ձեր հաւաքածոյ մը զարին զարգը պիտի կազմէր:

3. Տերեւներու հաւաքածոյ մը, որ թէ ձեր սկառտները բնութեան հետ պիտի մտերմացնէր թէ ձեր հաւաքատեղին պիտի զարգարէր և թէ ապագային յնախոյզի պէն մը պիտի ապահովէր:

4. Միջոցներու հաւաքածոյ մը որ ինչպէս վերը ըսինք պիտի ունենար իր որոշ օգտակարութիւնը:

5. Մաղիկներու և տուկներու հաւաքածոյ մը:

6. Խումբին մասին գրուած այսուրուրիւններու ալպոմ մը:


7. Հետախուզական պատկերներու և կազարարներու հաւաքածոյ մը:

8. Մասի նեխերու հաւաքածոյ մը: Այս հաւաքածոն կազմելու համար հայթայթեցէք մաքուր տեսրակ մը և առաջարկեցէք ձեր սկառտներուն և բարեկամներուն որ իրենց աջ ձեռքի բխմանաւր գոյնի մը վրայ, ձնչելէ վերջ ձեր տեսրակին մէջ կոխեն և ահա այսպէսով պիտի ունենաք բաւական հետաքրքրաշարժ հաւաքածոյ մը:

9. Խղուցներու հաւաքածոյ մը:

10. Քարերու և ժայռի կտորներու հաւաքածոյ մը որ միեւնոյն ժամանակ կրնայ երկրաբանի պէն մը ապահովել ձեզի: Եւ տակաւին ինչե՛ր ինչե՛ր:

(Այս մասին տես «Հայ Սկառտ» Բ. տարի թիւ 2 էջ 28: (Ծ՝ Խ.))



ՆՈՐԸՆԾԱՆ *

ՍԿԱՌՏԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՒՆ

ՄԷԿ ԱՐԱՐ

ԱՆՁԻՆՔ

Խմբապետ
Ա. Առաջնորդ

Բ. Առաջնորդ
Գեր Առաջնորդ

Նորընծան

ՏԵՍԱՐԱՆ

Սկառտական ժողովի սեփեակ մը: Սեղան մը որուն շուրջ բոլորուած են առաջնորդները:

(*) Ա. անգամ ներկայացուած Բեկնանիս Թատրոնին մէջ:

ՏԵՍՐԱՆ Ա.

Խմբապետ և դեր-առաջնորդը վարագոյրին բացուելէ քիչ վերջը ներս կը մտնեն մինչ Ա. և Բ. առաջնորդները արդէն սեղանին շուրջ նստած են:

Խմբապետ.— Անցեալ առաջնորդական հաւաքոյթին որոշած էինք ձեր և անկար կենջ մը օգնութեան մասին առաջարկներ ներկայացնել, ուրեմն կը սկսիմ. նախ դուն (Ա. առաջնորդին) այս մասին ի՞նչ մտածեցիր:

Ա. Առաջնորդ.— Կարծեմ լաւ պիտի ըլլայ իւրաքանչիւր խմբակի շարժական գանձումներէն մաս մը այս նպատակին յատկացնել:

Բ. առաջն.— (Քիչ մը մտածելով) Համամիտ եմ Աղուէսին բայց հասոյթը աւելի ևս բազմապատկելու համար կարելի է նաև «այստան» շարժ մը յայտարարել և ամէն սկառտի ձեռնարկան աշխատութեան հասոյթն ալ արդէն գոյացած գումարին վրայ բարգել:

Գեր-առաջն.— Փոքր ներկայացում մըն ալ արհամարհելի գումար մը չը պիտի հայթայթէր:

Խմբ.— Իսկ ես ամէնուզ ալ ձայնակից ըլլալով վաղուքնէ իսկ կը դիմեմ հիւանդանոցի հոգաբարձութեան և կը կը յուսամ 2—3 օրէն այդ կինը հիւանդանոց փոխադրելով անոր ծախքերը հոգալ. առ այժմ այսչափ: (Բ. ա.)

ուսմանը որչափ որ խոսքը) Մեր հասցէին եկած նամակներու ընթերցումը կրնաս սկսիլ :

Բ. առաջն.— (Նամակ մը պատուելով կը կարդայ :

Հ. զիւղ, 18 Սեպտ.

Ազնիւ սկառուտներ

Անցեալ ամառ մեր գիւղը ըրած ձեր արշաւի ընթացքին, բանջարեղէններու մասին ձեր տուած խորհուրդը գործադրելով՝ այս տարի կրկին բերք ստացած եմ, որուն համար իմ ամենախորին շնորհակալութիւնս յայննելէ վերջ, իբր յիշատակ, գրաւերիս հետ ծաղկանոցիս ամենասիրական թաղարներէն մին կը զրկեմ, յուսալով որ գալ տարի ևս պիտի այցելէք մեր գիւղը, ուր՝ այնքան սիրելի եղաք մեզ զիւղացիներուս՝ ձեր ազնիւ վարուելակերպով :

Յարգանք՝ Յովհաննէս Անդրէասեան (ագարակատէր) :

Ա. առաջն.— Ահա նամակ մը որ մեզի ազնիւ հպարտութիւն կը պատճառէ :

Խնք.— Համեստութեան սահմաններէն չանցնելով :

Բ. առաջն.— (Ուրիշ նամակ մը կը կարդայ) :

Կ. Պոլիս, 28 Դեկտ.

Յարգելի խմբագրատ

Զաւակիս հանրակարգի արկածէ մը վիրաւորուած պահուն, ձեր սկառուտներուն կողմէ անոր նախնական դարմանները տալով հիւանդանոց փոխադրելը այնքան յուզած է զիս որ, խորապէս կը ցաւիմ այն օրէնքին վրայ որով 12 տարեկանէն վար եզոզ տղաքը սկառուտութեան չեն ընդունուիր այսպէս զրկելով գաւախ ձեր շարքերուն մէջ արձանագրուելէ : Սակայն այժմէն իսկ անոր ապագայ սկառուտ մը ըլլալուն կրնաք վտահ ըլլալ : Յարգանք և խորին երախտագիտութեամբ :

Ռուբէն Շահմարեան

Յ. Գ. Զաւակիս ներկայ առողջական վիճակը բաւական գոհացուցիչ է, շնորհիւ ձեր սկառուտներուն ցոյց տուած նախնական միջոցներն :

Դեր-Առաջ.— Փաղաքչական նամակ եւս :

Խնք.— Եւ որուն արժանի եղած էք ձեր իրական սկառուտի վարուելակերպով :

Բ. Առաջ.— Բայց մենք մեր պարտականութիւնը կատարած ենք :

Խնք.— Կը տեսնեմ որ սկառուտական ոգին սկսած է ձեր մէջ :

Ա. Առաջ.— Օհօ՛ . . .

Խնք.— Միայն թէ պէտք է որ ան՝ նորընձաններուն ալ թելադրէք :

Ա. Առաջ.— Դժբախտաբար կան նորընձաներ, միշտ բացառութիւնները յարգելով, որոնք հագուստ հագնելու, շքանշաններ կրելու և աստիճաններու բարձրացում ունենալու համար միայն սկառուտ եղած են :

Խնք.— Կարծեմ քու խմբակիդ նորընձաներէն մէկուն կ'ակնարկես որուն անունը հեղանանքով «Առիւծ» գրինք, իրաւունք ունիս չափազանց յաւակնոտ և պոռոտախօս է, կարծեմ թէ մեր փորձառական խաղերէն մին իր վրայ ալ ի դորձ գնելու պիտի հարկադրուինք :

Ա. Առաջ.— Ոչ թէ հարկադրուինք, այլ այժմէն իսկ եթէ կարելի է պէտք է ի դորձ դնենք, թէ իրեն և թէ միւսներուն լաւ դաս մը տալու համար :

Խնք.— Կը կարծե՞ս . . . լաւ ուրեմն ես կը մեկնիմ (կը մեկնի) :

ՏԵՍԻՒԼ Բ.

Նոյնի (քիչ վերջ) նորեմսն (արտաոց փողկապ մը կապած, ծուռ և տափակցած գլխարկ մը, թափթած հագուստներ, աւելորդ զարդերով պճնուած և խնձոր մը խածնելով) :



Դեր-Առաջ.— Զափազանց անտանելի դառնալ սկսած է. իր ներկայութեանէն ամէնքն ալ կը խորշին որովհետեւ ստիպուած են իր երեւակայական քաջագործութիւնները մտիկ ընել :

Ա. Առաջ.— Փորձառական խաղին կատարումէն վերջ երեւակայեցէք մեր ճնորընձայ առիւծին՝ դէմքը. հահ . . . հահ . . . (Ամէնքը կը խնդան) :

Բ Առաջ.— Ահաւաստիկ անոր սանձաշնն է, լուեցէ՛ք, կամաց մը կը խուսափինք:

ՏԵՍԻԼ Գ.

Նորընծայ.— (Դուրսէն) Անպատկա՛ւ, ես անոր կը հասկցնէի, կոշտ, անկիրթ (առանց ներկաները նշմարելու ներս կը մտնէ) Ես դիտէի ընելիքս սակայն՝ պարագաները չէին ներեր:

Ա.Առաջ.— (Յաճ ձայնով քովիններուն) դարձեալ սկսաւ. քալեցէ՛ք (Ամէնքը կը մեկնին):

Նորընծ.— Ի՞նչ ալ կոշտ մարդիկ կան եղեր աշխարհիս վրայ, հանրակառք պիտի նստէի, բազմաթիւն կար, պէտք է անցնիլ ըսի ինքնիրենս ո՛ն Սիմօն, պէտք է անցնիս, քու ճարպիկութեանդ կ'ապաստանիմ!! և թեւերս սօթեցիւմ նետուեցայ ասպարէզ. նախ ինծի խոչընդոտ հանդիսացող տիկինները, սանկ քաղաքավարութեամբ սկսայ մէկ կողմ հրել, որով հազիւ նպատակէն 2 մէթր հեռու էի երբ ցնցոտիներ հագած, ձկնորսի զգուելի երեւոյթով մէկը առջեւս անկուեցաւ, ըսի, հարթենք խոչընդոտները, և ճիւղն մարմնիս ճապուկ մէկ շարժումով սկսայ յառաջ սողոսկիլ, բայց ո՛վ դժբախտութիւն, առջեւի ձկնորսիս սաքին վրայ էի կոխած, բռունցքի հարուած մը կուրծքիս և անա արդէն գետնին հետ մօտէն բարեկամութիւն հաստատած էի, սակայն, վստահ եմ ասիկայ ոչ թէ ձկնորսին բռունցքի հարուածին՝ այլ իմ դիւրաթեք մարմնոյս պատճառով էր: Անմիջապէս պաղարիւնս վերազանելով ստքի կանգնեցայ և այդ անկիրթ արարքին հեղինակը չափափելով կուրծքս բաց, հերոսաբար 2 սանթիմ յառաջացայ և գոչեցի անպատկառին երեսին, պարո՛ն վար իյնալուս գլխաւոր դրդապատճառը ձեր քով կենցաղագիտութեան պակասն է, ճէ միւսիւ. պատասխանեց անկիրթը աներեսօրէն, մինչ ես կէս սանթիմ եւս յառաջացած էի, մենք անանկ գուարաւճայէն չալամիւ չենք ըներ ամա՛, դուն նայէ քի պաշխասիին օտկին վրայ չը կօխէս:» Չայրոյթս իր գազաթնակէտին հասած էր, քիթին բերնին շառաջուն ապտակ մը պիտի իջեցնէի... սակայն պարագաները չէին ներեր, վերջին հերոսական ակնարկ մըն ալ նետեցի վրան և... քաջարար... հեռացայ: Վստահ եմ գայն խոր սարսափի մատնելով և վրէժ լուծելու ալ հատուտ մտադրութեամբ... կը ցուլիմ ասանկներու վրայ որոնք կը յանդիմնին ինծի հետ չափուիլ, ես որ...:

ՏԵՍԻԼ Դ.

(Նոյն եւ ցնցոտիներով խեղճ մը)

Յնցոս.— (Որ բաւական ասենէ ի վեր ներս մտած է և չի համարձակիր խանգարել, վերջապէս համբերութիւնը հասնելով) Ներողութիւն պարոն...:

Նորընծ.— Ի՞նչ, ներողութիւն, (մեկուսի) կ'երեւի ան ձկնորսին կողմէ կուգայ:

Յնցոս.— Կը ներէք ձեզ խանգարելուս...:

Նորընծ.— Ոչ, ոչ, թող ան վստահ ըլլայ որ վրէժս պիտի լուծեմ:

Յնցոս.— Ձեր, սկսուաներուդ, բարի համբաւէն քաջալերեալ կը խնդրեմ որ...:

Նորընծ.— Կը խնդրէք որ ներե՞մ... ոչ ոչ անկարելի է:

Յնցոս.— Ոչ պարոն, թիւրիմացութիւն կայ:

Նորընծ.— Ի՞նչ թիւրիմացութիւն պիտի ըլլայ, հապա գալիկած բռունցքի հարուածը:

Յնցոս.— Ի՞նչ կ'ըսէք պարոն ստանկ բան մը պտահած չէ:

Նորընծ.— Ի՞նչ հակառակը կը պնդես:

Յնցոս.— Կը ներէք ես...:

Նորընծ.— (Մեկուսի) Կը մեղքնամ ալ ինչ որ է ներենք: (Բարձր) Է՛հ, այն ժամանակ կ'ընեո որ թող գոյ ինք անձամբ ներողութիւն խնդրէ:

Յնցոս.— Բայց պարոն հոս չի կրնար գալ հիւանդ է... և արդէն եկած եմ որ ձեր աջակցութեամբ հիւանդանոց փոխադրենք:

Նորընծ.— (Մեկուսի) Կ'երեւի ասպետական ակնարկէս ազդուելով հիւանդացիք է...:

Յնցոս.— Արդեօք հիմայ կարելի՞ է:

Նորընծ.— Ոչ, թող իրեն պատիժ ըլլայ ատիկայ...:

Յնցոս.— Բայց ի՞նչ կ'ըսէք, յանցանք մը չէ գործած որ:

Նորընծ.— Եւ տակաւին ալ կ'ուրանա՞յ...:

Յնցոս.— Սակայն, ի՞նչպէս կ'ուզէք որ պառաւ կլին մը ձեզի շարիք հասցնէ:

Նորընծ.— (Չորմացած) Ի՞նչ պատաւ կլին...:

Յնցոս.— Այս պարոն, պրոպա կլին մը որ հիւանդ է և որ ձեր աջակցութեամբ հիւանդանոց պիտի փոխադրենք:

Նորընծ.— Ուրեմն, ինչո՞ւ համար զիս խանգարեցիք:

Յնցոս.— Ես ձեզ խանգարել չուզեցի...:

Նորընծ.— (Վայ ստախոս (մեկուսի). (բարձր) պարոն, կրնաք մեկնիլ:

Յնցոս.— Խնդրեմ մի մերժ...:

Նորրևիծ.—(Դուռը ցուցնելով) Կրնաք մեկնիլ 3 ճևգոս.— Կը նե...

Նորրևիծ.— Եւ տակաւին կը պնդեա... (Կը սկսի յառաջանայ լայց երբ ցնցոտիաւոր անձը շարժում մը լինելով կը սկսի իրեն ուղուիլ, նորրևիծան կարծելով թէ իր վրայ պիտի յարձակի յետս կ'ընկրկի)։

ճևգոս.— Ես ընաւ չ...

Նորրևիծ.— Շուտ կորսուէ, մեզ բեռնակիր կործեցիր որ փոխադրենք...

ճևգոս.— Բայց սկառուները միշտ կ'օգնեն ուրիշներուն։

Նորրևիծ.— Կորսուէ ապա թէ ոչ...

ճևգոս.— Ապա թէ ոչ ք'ոչ...

Նորրևիծ.— (Ձի կրնալով պատասխանել) Անպատկա՞ն։

ճևգոս.— Ե՞ս...

Նորրևիծ.— Այո դուն, շուտ կորսուէ մէյ մ'ալ չի տեսնեմ, կո՞չտ...

ճևգոս.— (Դէմքին դիմակը վար կ'առնէ որուն տակէն խմրապետը երեւան կ'ելլէ, Եւ թեւերը ծալելով դիմացը կը կենայ)։

Նորրևիծ.— (Կ'ապշի ձը մնայ)։

ՏԵՍԻՒ Ե.

Առաջնորդները եւ դեր-առաջնորդ

Քննարկ.— (Առաջնորդներուն) Կը տեսնեմ որ այս նորրևիծայի մատին ձեր կաղմած դաղափարը շատ ճիշդ է, և իւրօք ան շատ հեռու է մեր ուղածին պէս սկսուտ մը ըլլալէ, սակայն կը յուսամ մեր շարքերուն մէջ առնելով, զայն դարձնել իրական սկառուս մը։

Վարագոր

ԵՐՈՒԱՆԴՅՄ. ԻԹԻԻՃԵԱՆ

ԻՆՉՊԷՍ ՍԿԱՌԻՏ ՄԸ ԿՐՆԱՅ ԳԻՇԵՐԱՏԵՆ ԱՍՏՂԵՐՈՎ ԺԱՄԸ ՀԱՍԿՆԱԼ

Պէտք է գիտնալ թէ ժամանակը այն է սկառուին համար ինչ որ է դրամը ազատին համար Պէտք չկայ անգամ մը եւս շնչոտելու թէ սկառուար ամենաամայի համբաններուն մէջ իսկ իր ժամանակը արդիւնաւոր կերպով կ'անցնէ, օգտուելով բնութեան իրեն աւանդած դասերէն և յայտնա, սկառուար ամայի համբէ մը անցած ատեն, եթէ ցերեկ է, դետնին վրայ նշմարուող հետքերու պատմութիւնները կը կարգայ իսկ եթէ գիշեր է այն ատեն աստեղադարդ երկինքը թանկագին ու հրահանգիչ դրօսանք մը կը պարզուէ իրեն 2 լիւրով առաջին պարագան որուն մատին ուրիշ տեղ խօսուած է, անցնինք երկրորդին, որ է աստղագիտութիւնը, ինչ աւելի գեղեցիկ է քան աստեղադարդ երկինք մը որ իր տարբերուն ներդաշնակ ու համընթաց շարժումներով հիացում և ազանք կ'ազդէ մեզի։ Սակայն իրական սկառուար շրաւահանալով գեղեցիկին ըմբոշխնուածով միայն կ'անցնինք օգտակարին։

Սկառուար «ժողով աղուէսի» մը նման գիտէ երկ-

նային մարմիններու շարժումներն ու երեւոյթները և անոնց միջոցաւ է որ թէ իր ուղղութիւնը կը օգտէ թէ կրնայ դարձանալի ճշգրտութեամբ մը հասկնալ գիշերուան ժամերը։ Մեր այս բաժնիքը գծուար բաներ չեն և դուք ալ նորրևիծայ սկառուներ, քիչ մը վարժութեամբ պիտի ունենաք գիշեր ատեն ժամերը հասկնալու առաւելութիւնը Բացատրենք։

Անշուշտ ամէն սկառուար գիտէ թէ բոլոր աստղերը բեւերային աստղին շուրջ կը դառնան արեւելքէն արեւմուտք ուղղութեամբ, սակայն արդիւնքն է մեր երկրագունդին 24 ժամէն ինք իր վրայ դառնալուն։

Որչ, երբ գիտնանք թէ տարւոյն ո՞ր օրը այնինչ աստղը ճիշդ կէս գիշերին հարաւ կը գտնուի, այն ատեն ամէն գիշեր որ և է ժամու մը այդ աստղը գիտելով կրնանք ժամը մօտաւորապէս գուշակել։ 24 ժամանք որ աստղ մը երկրորդուի օր մը ճիշդ կէս գիշերին հարաւ հասնի, հետեւեալ գիշերը 4 վայրկեան առաջ լոյն ճեղք կը հասնի և այսպէս շարունակաբար, եւ եթէ նկատի ունենաք աստղի մը արեւելքէն ելլելով կտր շրջանակ մը գծելը և արեւմուտքէն մարդ տնտելը 12 ժամ կը տեւէ, որ ըսել է 180 աստիճանը 12 ժամուան մէջ կը կտրէ, այն ատեն շատ գիւրին է ժամը հասկնալը։ Օրինակով մը պարզենք։ Որիտուս երկնքի ամենափայլուն աստղը Դեկտ. 31ին ճիշդ կէս գիշերին (ժամը 12) հարաւ կը գտնուի եթէ Մարտ 2ի գիշերը զայն գիտենք և աչքի չափով մօտաւորապէս հարաւէն 30 աստիճան անցած ըլլալը ճշդենք այն ատեն ժամը 10 ն է։ Տրամաբանները եթէ այդ աստղը Դեկտ. 31ին ժամը գիշերուան 12 ճիշդ հարաւ կուզայ ուրեմն Մարտ 2ին ժամը 8ին հարաւ պիտի գայ որովհետեւ օրը 4 վայր. առաջ հասնելով 60 օրուան կամ 2 ամսուան մէջ 4 ժամ առաջ պիտի հասնի օրը 12էն հասնելով կ'ունենանք 8 արդ ըսինք որ 30 աստիճան անցած էր հարաւը, եթէ 180 աստիճանը կամ Արեւելքէն Արեւմուտք կոր գիծը տասներկու ժամէն կտրէ այդ աստղը, ուրեմն 30 աստիճանը պիտի կտրէ 2 ժամէն (Պէտք է նկատի առնել ամառային և ձմեռային ժամերու փոփոխութիւնը) և որովհետեւ 30 աստիճան անցած էր հարաւը, 2ը կը բարդենք 8 ին վրայ և կ'ունենանք ժամը 10ը։

Կը տեսնեք որ չափազանց գիւրին և պարզ է աստղերու միջոցաւ ժամը հասկնալը, միակից գծուարութիւնը որ կայ այն ալ աչքի չափով աստղին Արեւելքը կամ հարաւը քանի աստիճան անցած ըլլալը ճշդեն է, սակայն վարժութեամբ այդ խոշնդոտն ալ կարելի է հարթել։

Ուրեմն մեզ կը մնայ միայն երեւակայել սկառուար որ գիշերը իր ճնշոքին մօտ նստած պահուն երբ կը հարցուի ժամը, պատուհանէն դուրս ակնարկ մը նետելով աստղերուն, հպարտութեամբ և հատիկ հատիկ կ'արտասանէ ժամուն քանին ըլլալը ի խոր դարձացում ամենուն։ Սկառուներուն գիւրութիւն մը սուած ըլլալու համար ստորեւ կուտանք փոքր մէկ ցուցակը զանազան գլխաւոր աստղերու ո՞ր օր ճիշդ կէս գիշերին հարաւ հասնելուն։

ՍԻՐԻՈՒՍ	(Մեծ Շուկ համաստեղութիւն)	Դեկտ. 31
ԱՐՔԹԻՐԻՒՍ	(Պուլիէ)	» 25
ԼԷԿՍ	(Բնար)	» 30
ԱԼՔԱՅԻՐ	(Արծիւ)	» 15
ԳԱԲԷԼԼՍ	(Այծ, կառավար)	» 5

ԱՆԻՍՈՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կը նշանակէ այս պատկերը :

Ասիկայ անսառի զիւրիւն անխօս էջերէն մին է . անտառի գիրքը իր գաղանիքները անոնց կը պատմէ միայն , որոնք զինքը կրնան կարգալ :

Հետեւեալ պատմութիւնը փոքրիկ տաւ մըն է , աղուէսի մը կողմէ գրուած , նայեցէ՛ք , իր հետքերը . Ա. խտերէն դուրս կ'ելլեն , յետոյ աղուէսը որս մը կը նշմարէ , իր քայլերը յամր և սեղմուած են այստեղ , զգուշութեամբ իր թաթերը ձիւնին մէջ կը մխրձէ աւելի լաւ գննելու և անակնկալի բերելու համար իր որսը , սրուն կը մօտենայ կամաց կամաց :

Որսը հաւ մըն է որուն հետքերը յատկօրէն կը տեսնենք Գ.ի մէջ , Բ.այց Դ. հասնելով հաւը կը զգայ թշնամիին գոյութիւնը և խօլալար ինքզինքը ազատելու ճիգ կընէ ասիկայ կը գուշակենք , իր հետքերէն որոնք իրարմէ աւելի բաց և զէշ կերպով այսինքն՝ բոլորովին զէս պատմող տպաւորուած են , ձիւնն ալ առդին անդին նկատուած է :


Նոյն միջոցին աղուէսը Բ. հասած է , հոն հաւուն վրայ խոյանալով անոր կը միանայ և զայն կը յափշտակէ , այս տեղն ալ հետքերը անկանոն են և քանի մը փետուր ու արեան բիծեր կը նշմարուին ձիւնին վրայ . Զ. տաւը կատարուած է , Պր. աղուէսը որսը բերանը կը փախչի այս ալ կրնանք հասկնալ այն հետքերէն՝ որոնք աղուէսին հետքերուն կ'ընկերանան , այս վերջինները հետքերն են զո՞րի մարմնոյն՝ որ երբեմն գետին քսուած է :

ՀԵՏԱՆՈՒՋՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ ՄԸ

« Հետախուզութիւն » անուն անդլիերէն գրութիւն մէջ հեղինակը հետեւեալը կը պատմէ .

« Կառքի մը հետքը կը տեսնուի ճամբուն վրայ . . . : Մենք մեզի , հետեւեալ հարցումը պէտք է ուզենք , կառքը բեռնաւորո՞ւած էր , եթէ այդ ի՞նչ էր պարունակութիւնը : Առաջին հարցման կրնանք պատասխանել , որովհետեւ կառքին անիւները խորապէս մխրձուած են աւազին մէջ . կրնանք հետեւցնել թէ կառքը ծանրաբեռնուած էր : Նմանապէս կըրնանք հաստատել ուրիշ կերպով մը , երբ զառիվերի մը առջև կը հասնի , կառքը կ'օկսի զիկ-զակ երթալ և երբ կը կենայ ձիւնու հանգիստ տալու համար , որպէսզի կառքը ծանրութեանէն կոնակի վրայ վար չ'երթայ , քար մը դրուած է ետեւի անիւին տակը , քորին խորունկ հետքը դեռ կը նշմարուի :

Ի՞նչ կը պարունակէր այս կառքը : Չոր խոտ : Կառքը ցած և առկախեալ ճիւղերով ծառերու տակէն անցած միջոցին իր պարունակութենէն մաս մը ստերուն կառչած է և կը նշմարուի . կառքը դամոտ կոչիկ հազած կառավարի մը կողմէ կը տարուէր , և անոր ձխամորձէն նկատուած քանի մը կտոր ձխախոտին տեսակը կը ցուցնէ թէ այս կարգի մարդիկ ինչ տեսակ ձխախոտ կը ձխեն :



Հետեւեալ լուծելի հարցումն ալ սա է թէ կառքը ե՞րբ անցած է : Հաւանաբար քանի մը ժամէ ի վեր : Տակաւին ձիւնն թարմ աղբը կը նշմարուի ճամբուն վրայ , աւելի լաւ նշան մը մեզ ցոյց կուտայ կառքին որ ասուն անցնելը : Կառքէն ինկած քանի մը յարդի շխաղեր տակաւին չոր են մինչ ճամբան՝ կէս ժամ առաջ տեղացող քիչ մը անձրեւէն խոնաւ է , ուրեմն կառքին անցնիլը հազիւ կէս ժամ կայ : Հիմայ քիչ մը արամարաննք : Ծանրաբեռնուած կառք մը ժամը A քիլօմէթրէն աւելի չի կրնար առնել , ուրեմն պէտք է որ այս տեղէն 2 քիլօմէթր անդին ըլլայ , եթէ ժամը 5 1/2 քիլօմ. բնենք 1 1/2 քիլ . պիտի շահինք կառքին վրայ , քառորդ ժամէն անոր կը հասնինք : Այս ակընկալութեամբ կը յառաջանանք , կառքին կը հասնինք և իրօք ալ նկարագրածիս պէս կառքը կը գտնենք , խոտով բեռնաւորուած և քովէն քալող կառավարով մը : Այս վայրկենական ուրուանկարը ցոյց կուտայ թէ ինչպէս հետախուզելու է :

Թարգմ. ԵՐՕ



Ներկանակ՝ EMILIO SALGARI

Ընդ. Թրգմ. Ն. ԵՍԿՈՐՈՍ ԲՕՍՊԵՆՔԵՂԵԱՆ

Ժ. ԱՂԻ ԶՈՒՐԸ

Ի՞նչ պատահելու վրայ էր արդեօք Ո՞ր փորձանքը կը սպառնար ինքններու գանձերուն խուզարկունքունս Ոչ որ պիտի կարենար բեր

Երկրաչափը և որսորդները, կառչած շոգեմակոյկի եզերքին, գլուխներն վեր բռնած, աչքերնին բացած ու սեւեռած սարսափելի մթնոլորտն մէջ որ թերեւս անմիջական փորձանք մը կը պատրաստէր, դունատուած և աննկարագրելի անձկութեամբ որրոտակցմուկ կը սպասէին վտանգին

Հուսարար՝ հնոցալից, ծովածիծառի մը նման կը սուրբար հնչուն ու շառաչումով մը ձեզքելով ալիքները Մորկան՝ շոգեզոհակները լեցուցիւր էր՝ մեքենան կրնար պայթիլ. բայց այս պահուս սչ որ կը մտածէր այս վտանգը՝ որ սակայն իրենց սպառնացող վտանգէն նուազ երկիւղալի չէր։ Շոգեմակոյկին մետաղէ կողերը կը դողային պտուտակի հարուածներուն ներքեւ որ յուսահատօրէն կը դաւալէր փրփրացող ալիքներուն մէջ և ջուրը բաւականաչափ անցք չէր գտներ ծխներուցէն ելլելու համար։

Երկրաչափը՝ գեռ իր անձին տէր, ցուռի նըստարանին վրայ կայնած լամբարի մը մօտ, վերէն եկող զգրդիւնը մտիկ կ'ընէր, հակառակ պտուտակի սարսող հարուածներուն, հակառակ մեքենայի մռնչիւնին ու շոգիի սուլումներուն, գլխուն վերեւ կը լսուէին խուլ աղմուկներ, խոր բոմբիւններ՝ խզուած պայթիւններու պէս, հեռուն գահալիժոյ ձիւնակոյտերու պէս։ Ի դուր լամբարը վեր կը բարձրացնէր, ի դուր՝ սղին մէջ այրած ածուխ կը նւտէր ու կ'երկննար. գմբէթը՝ անտարակոյս շատ բարձր բլլալով, անտեսանելի կը մնար։

Տասը վայրկեան անցած էր՝ առանց այդ դըրութիւնը, և աւելի ճիշդ, առանց այդ տագնապալից հոգեվարքը փոխուելուս Հուսարար միշտ կը սուրբար՝ ֆշալով, սուլելով, մոնչելով, աակնուզրայ ընելով ջուրերը, և զգրդիւնները միշտ կ'ածէին այդ անսահման լճին արձագանգները արթնցնելով։

Յանկարծ ջուրի խոշոր կաթիլ մ'ինչու Պարթընին երեսը

- Կ'անձրեւէ... պտուտայ
- Կ'անձրեւէ, բացապանչեց Սըր ձոն։ Լճակին երեսը ծածկեց անձրեւու սաստիկ շառաջ մը, որ երթալով խոսացուս Տարօրինակ բա՛նս։ Հեղեղօրէն կ'անձրեւէր ամէն կողմ։
- Արդեօք ամպը՞ր կան այս գետնակամարններուն ներքեւ, հարցուց Ս'Փոնոր։

— Ո՛չ, ըսաւ Սըր ձոն, անտարակոյս մեր վերեւը ընդգետնեայ ջրամբար մը կայ, որուն ջուրերը կը թափանցանեն ձեղքուածքներու մէջէն։

— Լուսիթիւն, տէր, ըսաւ Մորկան Մտիկ րէքը։ Հեռուն, լճակին խորը խուլ աղմուկ մը լսուեցաւ. անպին բարձրութիւնէ մը գահալիժոյ ջրակոյտի աղմուկին նման, յետոյ աճուելի բոմբիւններ լսուեցան՝ կարծես ժայռեր կ'իյնային ջուրերուն մէջ։ Խոշոր, փրփրալից կոհակ մ'եկաւ բազխեցաւ շոգեմակոյկին որ ուժգին տատանուեցաւ։

— Գլուխնիդ զգուշացէ՛ք, պտուտայ Սըր ձոն, կամարը կը փլլի։

Ջարձուրելի, ա՛նաւոր զգրդիւն մը խզեց իր ձայնը։ Ահագին գմբէթը՝ ով գիտէ ինչ զօրութեամբ շատ մը տեղերէ փլչելով կ'իյնար։ Խոշոր ժայռեր, հսկայ քարեր, հոյի կտորներ՝ բարձրէն կ'իյնային։

խաւ չչիններով խաւարը պատուելով, անդնդանալով, և սարսափելի բարձրութեամբ ջուրերը վեր նետելով չոս հոն, պատուածքներէն կը թաւալէին քարի կարկուտի հետ միասին կատաղի ջրհոսանքներ երբեք չի լսուած մեռչիւններով:

Սարսափելի տեսարան մըն էր, որ աւելի եւս սարսափելի կը գտանար այդ խոր մթութեան մէջ: Շոգեմակոյկը ամէն կողմէն հարուածուելով՝ մերթ անգոյն կը բարձրանար ու մերթ կը նետուէր խորունկ անդունդներուն մէջ՝ ուսկից կը տքար զուրս ելլել: զրկիթ այլ ևս չէր վազեր, նայիս՝ ցոռկը վեր կը ցցուէր, յանկարծ յետսակողմը վեր կը բարձրանար, մերթ աջակողմին վրայ կը թաւալէր՝ յառաջ քշուելով կամ ետ մղուելով: Վայրկեաններ եզան որ՝ նաւուն յառաջակողմը բոլորովն ընկղմեցաւ փրփրալից կոհակներուն մէջ ու պոռուսակը օգոյ մէջ կը գտանար:

Պարթըն, Օ՛Քոնոր, և Մարկան սահմուկամ, խլուցած ու ջուրէն կուրցած, երբեմն մէկ կողմը երբեմն միւս կողմը նետուելով այլ ևս չէին գիտեր որ աշխարհին մէջ ըլլանին Միայն երկրաչափը՝ քիչ մը իր հանդարտութիւնը կը պահէր՝ ջուրի այդ անուելի խառնակոյտին և թափփփող բեկորներու կարկուտին մէջ, որ երբեմն կը միջնցներ կանձեղներուն կարմրօրակ լոյսը: Յետ անգամ մը գետին գլտորուելու, ան նետուած էր յետսակողմը՝ կառչելով զեկի թեւեւակին: Իր ձայնը փողի մը նման հնչեց ջուրերու շառաչին, ժայռերուն ճոխրիւնին մէջ:

— Մարկան, մերենայիդ վազէ՛, Որխութիւն, բարեկամներ:

Մերենայարը, հակառակ՝ շոգեմակոյկին յուսահատ տատանումներուն, ինք զինք նետեց հնոցին մօտ որ ջուրէն մարելու վրայ էր: Առաւ երեք շորս կտոր ածուխ՝ նետեց փուրին մէջ, ու գոցեց զընակը:

Մերենան որ դադրելու վրայ էր, վերստին ոյժ առնելով, սկսաւ երազօրէն շարժիլ: Շոգեմակոյկը՝ միշտ տատանուելով սուրաց դէպի հարաւ՝ ալիքներուն վրայէն, որոնք ամէն կողմէն կը յարձակէին գամբերու վոհմակի պէս ոռնալով:

Փլուզումը զեռ լմնացած չէր: Ամէն կողմէն կը լսուէին՝ ժայռերուն բրդելով քահալիթարար անդունդ խորասուզուիլը մօայլ լիճը տակնուվրայ ընելով:

Միայն չորս հարիւր մեղր գացեր էր շոգեմակոյկը, երբ նոր մէկ ուժգին ցնցում մը սասանեց մեծղի քարայրին կամարները: Ահագին բեկորներ վար լծին մէջ թաւալեցան նորէն կատաղաբար յուզելով ալիքները: Պահ մը յանկարծ, անօրինակ տեսարան մը երեւցաւ երկրաչափին և ընկերներուն աչքին: Չոս, հոն, վեր, վար կը տեսնուէին լուսաւոր կէտեր. աստղեր կը թուէին, բայց խենթեցած աստղեր՝ որոնք մերթ վեր, մերթ հորիզոնական արշնալով երկայն լուսաւոր շաւիղներ կը ձեւացնէին, երբեմն կ'երեւնային և երբեմն կ'աներեւութանային: Զարմանալի, չլսուած և անհաւատալի բան. այդ լուսաւոր կէտերը, այդ կայծերը, կամ աստղերը ըսենք՝ ամէնքն ալ ջուրէն կ'ելլէին կը բարձրանային ու կ'իյնային՝ նորէն կ'ելլէին նորէն կը գահալիթէին:

— Ի՞նչ բաներ են ատոնք, բացազանչեց խառնածինը. աշխարհիս վերջն է այս:

ձիշդ նոյն պահուն լուսեցաւ Օ՛Քոնորին պոռալը:

— Մերենան ե՛տ. Մորկա՛ն:

— Ի՞նչ կայ, ըսաւ Սըր ձօն:

— Յովափը դիմացնիս է:

— Գարձո՛ւր, քերելով հետեւինք անոր:

Հուսաստ քիթը դարձուց, և սկսաւ գետափին դուգահեռական վազել: Տասնուհինգ վայրկեան ետք կը գտնուէր մեծ գետնասարահի մ'առջեւ, որուն մէջ կը թափէին լճին ջրերը:

Սըր ձոն հրամայեց հոն մտնել ձիշդ ժամանակն էր: Վայրկեան մ'ետք՝ աւելի անաւոր փլուզում մ'եղաւ լեռան պէս կոհակներ բարձրացնելով:

Հուսաստ հինգ կամ վեցհարիւր մեղր վազեց, յետոյ կեցաւ՝ բարձր, անմերձեանալի արունքի մ'առաջ:

— Ազատեցա՛նք, գոչեց Օ՛Քոնոր, որ կը զոյարդեու: Այդ քարայրէն ողջ ելլել չէի հաւատար:

— Լա՛ւ ճամբու վրայ ե՛նք, հարցուց Մորկան,

— Կը յուսամ, պատասխանեց Սըր ձոն:

— Սանը կրակին վրայ դի՛ր, նաւա՛ղ, ըսաւ:

Պարթըն սարսափը զիս սաստիկ անօթեցուց, չըմտնանք որսացուած կրեաները:

Նաւաղը շուտով գործի սկսաւ՝ խաչելու համար զնելով կրեայի միս, ընդեղէն և քիմիքաններ:

Երկու ժամ յետոյ ընկերներուն կը ներկայացունէր սպուր մը՝ որ, ա՛յնքան անոյշ կը բուրէր որ խառնածինն ըսածին պէս, ցամաքաջրային աշխարհի ամենէն վտանգաւոր թոքախտին իսկ ախորժակը կը գրգռէր:

Սըր ձոն, Պարթըն, Օ՛Քոնոր, ու Մորկան նստան տապակին շուրջ: Երկրորդը որ ամենէն աւելի անօթեցած էր, յարձակեցաւ զգալով, սակայն առաջին զգալին զոր կլլեց, դէմքը ծածկեց:

— Ո՛հ, նաւա՛ղ, գոչեց, քիլօ մըս՞ո՞ղ զրեր ես այս սպուրին մէջ:

— Ինչո՞ւ, հարցուց, Օ՛Քոնոր սպառած:

— Սարսափելի աղի է, ըսաւ Սըր ձոն համը նայելով:

— Եւ սակայն պուտ մ'աղ զրեր եմ, տէր:

— Ի՞նչ ջուր գործածեցիր.

— Քեռին ջուրը:

— Նայի համոտեցե՞ր:

— Ո՛չ:

— Քաւաթ մը լեցո՛ւր:

Նաւաղը գաւաթ մ'առաւ, խօթեց գետին մէջ, ու լեցուն բերաւ երկրաչափին, որ անմիջապէս գայն բերանը տարաւ:

— Բարեկա՛մք, գոչեց, սաստիկ այլայլած. այս ջուրը ծօլի ջուրէն աւելի աղի է:

ԺԱ. ՅՈՐՁԱՆՔԸ

Դժբախտաբար իրականութիւն էր: Քանի մ'օր առաջ՝ գժտին այնքան անուշ ու համեղ ջուրերը, յանկարծ աղի ու լեղի դարձեր էին ովկիանոսներու ջուրերուն պէս:

Ինքներուն զաններուն դցրախտ խուզարկուները՝ անտարակոյտ շարագուշակ աստղի տակ ձներ էին: Հաղի՛ կէս ժամ առաջ՝ ստոյգ հրաշքով մը

անաւոր վտանգէ մ'ազատած, երկրորդ փորձանքի մէջ կ'իյնային որ առաջինէն ոչ նուազ անաւոր, ոչ նուազ սարսափելի էր. կը սպառնար անոնց դոյու- լեանն Ասիկայ՝ ամենայամառ նահատապրին ամե- խորստ հարուածներուն կուրծք տուող երկաթեայ մարդիկն իսկ պիտի վնասեցնէր:

— Վճռակա՛ն է, ինքններու գանձերը գժքախ- տութիւն կը բերին, ըսաւ Պարթըն, առաջ փլու- զումներ, ու յետոյ անուշ ջուրի պակասը: Դեռ պիտի չլմնա՞ր:

— Չվճատե՛նք, ըսաւ Սըր ձնն անմիջապէս ինք- ղինք գտնելով. կայտութիւնը ըսաւ չէ, բայց շարա- գոյն ալ չէ: Անկարելի է որ այս ստորերկրեայս անուշ ջուրի տեղեր չ'աճենայ: Ո՞րքան ջուր ունինք Ս'Քոնոր:

Նուազը նայեցաւ տակառին:

— Վեց կամ եօթ լիգրոյէն աւելի չէ, ըսաւ գողահար ձայնով:

— Ե՛ս քիչ է. շուտով պէտք է մեկնինք:

— Դե՛ղի ո՞ր կողմը պիտի ուղղուինք, հիւսի՞ս թէ հարաւ, հարցուց Պարթըն:

— Քանի՞ օր անցաւ տակառը լեցնելէ՞ր ի վեր:

— Հինգ կամ վեց օր, պատասխանեց Ս'Քոնոր:

— Այդ օրէն ի՞նչ գեաին ջուրէն խմեցի՞ր:

— Ո՛չ, Պարոն:

— Վեց օր չափազանց է, կը նախընտրեմ յառաջ երթալ:

— Իսկ կերակու՞րը, աւելցուց Ս'Քոնոր:

— Նե՛տէ՛, ու թէ որ անօթի ես, պակասմաս գի՛ր ակռաներուդ տակ: Ետե՛ս ընցնե՛նք բարե- կամք, կորսնցնելու ժամանակ չունինք:

Վեց շիշերու մէջ գոցել տուաւ՝ տակառին մէջ հազուադուր ըմպելիքը. կարելի եղածին չափ շատ լոյս ունենալու համար՝ բոլոր կանխեղներն ալ վա- ուել տարով, մեկնումի նշանք տուաւ:

Հուսովար՝ որ հակառակ ակնքներու բախումին և փլուզումին կարեւոր ֆիաս մը կրած չէր, համբայ ելաւ հնչուն սարսուռով ալիքները պատռելով:

Այս նոր գետը 130 քայլէն աւելի լայն էր, կա- տաղի, և շատ ալ խոր կ'երեւար: Ընդ աջ ու ձախ կողմերը կը բարձրանային՝ սեպալեայ, առանց մէկ պատուածքի ու բոլորովին չոր՝ սեւ բարձր պա- տեր: Սըր ձնն առաջին ակնարկով ի հասկացաւ՝ որ տանք հրաբխային ժայռեր էին:

— Թէ որ այս պատերը չփոխուին, շատ հաւա- նական է որ կաթիլ մըն ալ ջուր չգտնուի, ըսաւ Պարթընին, որ անյազօրէն չոր մտի կտոր մը կը կրճէր:

— Բայց, ի՞նչպէս եղաւ որ գետիս ջուրը աղիա- ցաւ, հարցուց խառնածինը:

— Ատիկայ գիւրին չէ բտեր: Թերեւս գետը հա- զօրդակցութիւն մը սննի Մեքսիկայի ծոցին հետ:

— Ի՞նչ տեղ գազափար ունեցեր է Արարիչը ծովերուն ջուրը աղի ընելու:

— Կը հայնոյն Պարթըն: Թէ որ ծովը աղի չըլ- լար, շատ մը ծանր փորձանքներ կը պատահէին:

— Լըջօրէ՞ն կը խօսիք, տէր:

— Անչո՛ւշտ, Պարթըն: Այլ և ո ջուրերու ըջանք կարելի չըլլալով՝ բեւեռային գօտին աւելի վար պի- տի իջնէր, այնպէս որ Անգլիան և Իրլանտան՝ ծիւնի երկու անապատներու պիտի վերածուէր:

— Ո՞՛ն:

— Դեռ բարբը այս չէ: Մինչդեռ այրեցեայ գօ- տին՝ այնքան տաք պիտի ընէր որ, պիտի խաչէր իր խեղճ ընակիչները:

— Որտե՞սն, կայծակ:

— Աւելցուր նաև որ շատ մը երկիրներ ջրհե- ղեղեան անդադրում անձրեւներէն պիտի ողողուէին, դեռերը յորդահաս պիտի ըլլային, և օդոյ մէջ շատ աւելի ելեկտրականութիւն պիտի ըլլար:

— Երբ որ այսպէս է, կը խոնարհիմ Արարչին ի մասսա թեան առջև:

— Կրնաս խոնարհիլ, ըսաւ Սըր ձնն. Ժպտելով: Լըջօրէն խառնածինը խոնարհելու վրայ էր, երբ յանկարծ Ս'Քոնորին ձայնը վիճք ընդստ կանգնեց:

— Օ՛, թուշուն աստղներ, պոռացած էր նուազը:

Երկրաչափը և խառնածինը գէպի յետադուր գառնալով՝ տեսան հարիւրաւոր լուսակէտերու խա- ւարին մէջ փայլիլը, զիբար խաչածեւելով, վեր բարձրանալով, ընկղմելով՝ յետ երեսուն քառասուն, և մինչև իսկ յիսուն մեղր լուսաւոր շաւիղներ գը- ձելու:

— Ի՞նչ աստղներ են ասոնք, հարցուց խառնա- ծինը: Կը յիշեմ որ լճին կամարն ալ երբ կը քայ- քայէր, հազարաւորներ միջոցը կը լուսաւորէին:

— Կամ ես ինքզինքս չարաչար կը խարեմ, կամ ասոնք ձկներ են, ըսաւ Սըր ձնն:

— Չկնէ՛ր: Բայց, տէր, չէ՞ք տեսներ, կը փայ- լին: Մանաւանդ թէ՛ կայծորիկներ ըսէ՛ր:

— Ո՛չ, ձկներ են Պարթըն:

Շարունակելի



Ո՞ւր են բարեկամներս

Կողքին վրայի հնդիկը իր բարեկամները կորսնցու- ցած ըլլալով կը խնդրէ բոլոր սկառանքէն որ հասնին իրեն տեղեկացնել անոնց ուր գտնուիլը:

Կարմիր գոյնով եւ յստակօրէն օլէտը է նշանա- կել զէմքերը: Առաւելսգոյն չափով զէմքեր գտնողին, եւ առաջին հանդիսացողին կը խոտանանք նուիրել 1 տարուան, երկրորդ հանդիսացողին 6 ամսուան եւ երրորդ հանդիսացողին 3 ամսուան «Հայ. Ախաւս»:

Կտրոնին մէջի բաց ձգուած տողերը լեցնել եւ պատկերին հետ միտտեղ այս մասն ալ զրկել Հ. Մ. Լ. Մ. ի կեղծումը, Սիրբէճի Խօրասանճեան խան թիւ 26 ՎԹ. Շ. V, հասցէով:

Պայմանաժամը մինչև 15 Մայիս է: Բարգմաթիւ ճիշդ լուծումներու պարագային, փոսթ ձգուելու թու- կանը ի նկատի կ'առնուի:

Անուն
Խումբ
Հասցի
Թուակալ